COUNTY OF LOS ANGELES
OFFICE FOR THE ADVANCEMENT OF EARLY CARE AND EDUCATION

CONRAD N. HILTC FOUNDATION

COUNTY OF LOS ANGELES Public Health

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻՑ ԱԶԱՏՈՒՄՆԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆՈՐԱԾԻՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՀԱՍԱԿ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ի՞ՆՉ Է ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻՑԱԶԱՏՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Լոս Անջելեսի Շրջանի Նախադպրոցական Խնամքի և Կրթության Զարգացման Գրասենյակը (OAECE), Քոնրադ Ն. Հիլթոն Հիմնադրամի հետ համագործակցությամբ, առաջարկում է վերանորոգման կամ շինարարական ծրագրերի համար հաստատությունների վճարներից ազատումներ երեխաների խնամքի այն հաստատություններին, որոնք նախագծի ստուգման և/կամ թույլտվությունների կարիք ունեն:

ԱՐԴՅՈ՞Ք ԻՆՁ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՒԳՈՒՄ ԿԱՄ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

Երեխաների խնամք տրամադրողները, ովքեր ցանկանում են վերանորոգել և/կամ կառուցել երեխաների խնամքի հաստատություն, պետք է կապ հաստատեն Լոս Անջելեսի Շրջանի Տարածաշրջանային Նախագծման Վարչության, ինչպես նաև Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Աշխատանքների Վարչության Շինարարության և Անվտանգության Բաժնի հետ՝ որոշելու, թե արդյոք ծրագրի համար անհրաժեշտ կլինի նախագծի ստուգումմ/կամ թույլտվություն: Երեխաների խնամքի մատակարարը պետք է նաև կապ հաստատի Կալիֆորնիայի Հանրային Ծառայությունների Վարչության (CDSS) Համայնքային Խնամքի Արտոնագրման Բաժնի (CCLD) հետ՝ ճշտելու համար նորածինների/մանկահասակ երեխաների խնամքի արտոնագրման պահանջները:

LA COUNTY PLANNING

Զո Աքսելրոդ
Zaxelrod@planning.lacounty.gov

Public Works LOS ANGELES COUNTY

Ջովի Էստրամոս
jestremos@dpw.lacounty.gov

CDSS CALIFORNIA DEPARTMENT OF SOCIAL SERVICES

Համայնքային խնամքի լիցենզավորման բաժին
Շողիկ Խադարյան
Shoghig.Khadarian@DSS.ca.gov

Էլ Սեգունդո/ Էլ Սեգունդոյի հյուսիսային տարածաշրջանի գրասենյակ՝ (424) 301-3077

Մոնթերեյ Փարք/ Մոնթերեյ Փարքի հարավ-արևմտյան տարածաշրջանի գրասենյակ՝ (323) 981-3350

Փալմդեյլի տարածաշրջանային գրասենյակ՝ (661) 202-3318

Եթե վերը նշված վարչություններից որևէ մեկը որոշի, որ պահանջվում է Հրշեջ Վարչության կողմից նախագծի ստուգում և/կամ թույլտվություն, վարչություն(ներ)ը ուղղակիորեն կապ կհաստատի Հրշեջ Վարչության հետ:

ԱՐԴՅՈ՞Ք ԵՍ ԻՐԱՎԱՍՈՒՄ ԵՄ ԱԶԱՏՎԵԼ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻՑ

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Դիմորդները պետք է երեխաների խնամքի հաստատությունում սպասարկեն նորածիններին և մանկահասակ երեխաներին (ծնված օրվանից մինչև 3 տարեկան) և տրամադրեն Կալիֆորնիայի Սոցիալական Ծառայությունների Վարչության Համայնքային Խնամքի Արտոնագրման Բաժնի (CCLD) նորածինների/մանկահասակ երեխաների խնամքի արտոնագիր:

ՏԱՐԱԾՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Հաստատությունը պետք է գտնվի Լոս Անջելեսի Շրջանի Չընդգրկված (unincorporated)տարածքում և Արտեզիա, Քարսոն, Սերիտոս, Ինդուսթրի, Բրվինդեյլ, Լա Քանյադա Ֆլինթրիջ, Լա Միրադա, Լեյքվուդ, Լոանդեյլ, Լոմիտա, Ռոլինգ Հիլս, Ռոլինգ Հիլս Էսթեյթ, Սանտա Ֆե Սփրինգս կամ Ուեսթլեյք Վիլիջ քաղաքներում:

ՈՐՏԵ՞Ղ ԿԱՐՈՂ ԵՄ ԳՏՆԵԼ ՀԱՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հավելյալ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Լոս Անջելեսի Շրջանի Նախադպրոցական Խնամքի և Կրթության Զարգացման Գրասենյակի (OAECE) կայքէջը՝ կարդալու «Երեխաների խնամք բոլորի համար. ինչպես կառուցել եվ վերանորոգել նախադպրոցական խնամքի եվ կրթության հաստատությունները Լոս Անջելեսի Շրջանում» գործիքակազմը:

https://childcare.lacounty.gov/special-projects/